ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
15.12.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/11-2 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան <<05>> 06 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<Սմարթլայն>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 15.12.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/11-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. *Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 15.12.2022թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

## 2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ | <<Սմարթլայն>> ՍՊԸ |
| ք. Երևան, Արմենակյան 108/4 | ք. Երևան, Խորենացի 112 |
| ՀՎՀՀ 01508793 | ՀՎՀՀ 01548908 |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ | h/h 1150009537660100 |
| Հ/Հ 1150001612200100 | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ |
| Մ. Ադամյան | ssmartline@mail.ru |
| | 055-30-00-93 |
| | Տ. Ղարիբյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |